

ԻՐԱՎՈՒՆԿ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ԶՈՐԵՔԵԱԲԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Պոլիարիոյ համար Տարեկան 12 ֆր.
» » Վեցամսեայ 6 ֆր.
Առաստաղմանի համար (երկու քիւր մեկ ծրարով) Տարեկան 14, վեցամսեայ 7 ֆր.
ԿԱՆՆԻՎ ՎՃԱՐԵԼԻ

Համակ դրամ եռայլն դրկիլ հետեւեալ հասցեով
ԽՐԱԳՐՈՒԹԻՒՆ «ԻՐԱՎՈՒՆԿ» ԼՐԱԳՐՈՅ. — Վ.Ա.Ռ.Ն.Ա. (Պոլիարիա)
Редакция на вѣст. Редакция du journal
„Ирравункъ“ „Irravounek“
ВАРНА (България) VARNNA (Bulgarie)

Խմբագրութեան ուղղեալ գրութիւնք
էս չեն դրկուիր եւ յարմար դաստաւ-
ները միայն կը հրատարակուին աւ-
անդրովին կամ մասամբ.
Խանութեան տղը 20 սանթիմ. երե-
կեն աւելի անգամներու համար 20 0/0
զեղջ կը լինի.

ԴԵՍՊԱՆԱՆՈՐՅՈՒՐԴԸ

Վաղը Լահէյի մէջ պիտի գու-
մարուի այն Դեսպանախորհուրդը
որուն պաշտօնը պիտի ըլլայ պե-
տութիւններուն սպառազինութիւն.
ները նուազցնելու կամ գոնէ վա-
նանք կասեցնելու միջոցները որո-
նել. Դեսպանախորհուրդը պիտի
յաջողի՞ հասնիլ իր նպատակին.
այդ է առաջին հարցը որ կը ներ-
կայանայ մեր մտքին եւ որուն ո-
րոշ պատասխան մը տալ շատ դը-
ժուարին է դիւանագիտական աշ-
խարհի գաղտնիքներուն իրազեկ
չեղանքներու համար. եւ չորսեր
արդէն այս մասին գլուխ յոգնեց.
նող քաղաքական նուրբ հաշիւնե-
րու եւ ենթադրութիւններու մէջ
մտնել, քանի որ շատ քիչ ժամա-
նակէն Դեսպանախորհուրդը իր
կատարելիք գործով ինք պիտի
տայ հարցման դրական պատաս-
խանը.
Սակայն ինչ որ ալ ըլլայ Դեսպա-
նախորհուրդին արդիւնքը, այդ
ժողովին գումարուած ինքնին շատ
շահական երեւոյթ մըն է: Կրնանք
վայն քաջ մը, գոնէ պզտիկ ու
առատամաստ քաջ մը նկատել դէ-
պի գործադրութիւն գերազանցա-
պէս մարդասիրական նպատակի
մը, մշտնջենաւոր խաղաղութեան
նպատակին, զոր առհասարակ թա-
գալիք գլուխներ, պետական մար-
դիկ եւ ամեն գործնական մտքի
տէր համարուող վարչական անձե-
ր ծաղրած են ցարդ միշտ իրր հղ-
չերութեամբ եւ տղայական, անի-
րանալի երազ, կամ, մինչեւ իսկ
խստիւ հարուածած են իբր քնա-
սակար գաղափար, փաստաբանե-
լով պատերազմի անխուսափելի
հանգամանքը ու ջատագովելով ա-
նոր ինչ ինչ օգուտները:
Ու այսօր կը տեսնենք թէ աշ-
խարհի ամենէն աւելի աստուած-
պետական հանգամանք կրող ու
ամենէն աւելի բռնապետական նը-
կատուած տերութեան մը պետին,
տակաւին բացարձակ միապետա-
կան դրութեամբ կառավարուող
միակ քրիստոնեայ երկրին վեհա-
պետին հրաւերով մեծ ու պզտիկ,

եւրոպական եւ ասիական 30
աւելցած իւնիւնի յօժարասիրտ կը
փութան իրենց ներկայացուցիչ-
ները զրկիլ հոլանտայի մարտաքա-
ղաքը, որպէսզի հոն խորհին ու ո-
րոշեն թէ ինչ միջոցներով կարե-
լի է քաղաքակիրթ երկիրներու
արդի ահռելի սպառազինութեանց
եւ իրենցմէ հետեւող անտեսական
այնքան մեծ աղէտներու առաջ-
քը գոնէ մասամբ մը առնել:
Քաղաքական աշխարհի մէջ
մինչեւ այսօր պարզուած տեսա-
րանները եւ դիւանագիտութեան
այնտեղ կատարած դերերը ուշա-
դրութեամբ դիտելով, անկարելի է
մեզ, անտարակոյս, ընդունիլ թէ
ազատաստիւ-մարդասիրական սկզ-
բունքներ ընկերութեան տիրող դա-
սակարգին մինչեւ ամենարարձր խա-
ւերդարդէն թափանցած ըլլալով, ա-
նոնց խիղճը ցնցեցին որ այժմ
բարձրաձայն եւ անողոր խստու-
թեամբ կը պահանջէ խնայել ժո-
ղովուրդին արեւին ու վտիտ քը-
սակին, ու սփռել անոր թշուա-
ռութիւնը: Ամեն ինչ մեր, չորս
դին, յայտնապէս կը ցուցնէ թէ
տակաւին հետեւ ենք այն ոսկէ-
գարէն ուր կառավարողները կա-
ռավարուածներու ցուերուն գի-
տակից ու մասնակից ըլլան: Ժո-
ղովուրդներու ցուերուն կարեկցու-
թիւնը դեր չունի ուրեմն տէրու-
թիւններու այս ձեռնարկին մէջ:
Ինչ բանի կը պարտի ուրեմն այն
իր ծնունդը:
Ընկերութեան արդի կազմաւո-
րութեան մէջ քաղաքակիրթ եր-
կիրներու հարստութիւնը տարուէ
տարի զգալապէս բազմապատկուե-
լով հանգերձ՝ աղքատներու թիւը
նոյն համեմատութեամբ կը մեծ-
նայ. կամ, մինչ կողմէն հարստու-
թիւնը կը շատնայ, միւս կողմէ
հարուստներու թիւը կը նուազի:
Վիճակագրութեամբ հաստատուած
այս իրողութիւնը պարզ ու բնա-
կան հետեւանքն է անտեսական
ազաւտ մրցումին որ կը տիրէ ա-
մենուրեք: Դրամագլուխը կը կեդ-
րոնանայ հետզհետէ նուազ թուով
ձեռքերու մէջ: Իրերու այս կա-
ցութեան մէջ, պետութիւններու
պիւտճէն, եւ զլխաւորապէս պա-

տերազմականը, անոր բարձրու-
թեան հասնելով, եկաւ ինք ալ
տնտեսապէս ճգնիլ ժողովուրդը:
Այս ամենուն արդիւնքը սա եղաւ
որ այսօր եւրոպական մեծ ու
պզտիկ կեդրոններու մէջ ձեռքի
աշխատանքով օրէնք մը ճարելու
կարօտ մարդիկները ստուար բա-
նակներ կը կազմեն. ասոնց գոյաւ-
թիւնը արդէն վտանգ մըն է որ
կը սպառնայ տակաւին մեծնալ,
բանի որ տակաւ կը մեծնայ աշ-
խատուող դասակարգի թիւը
Միւս կողմէ սակայն, այնքան աշ-
խատուող ձեռքերու ահագին
արտադրութեան համարեւականա-
բար տակաւ նստե անկարելի կը
դառնայ սպառող բաւականաչափ
հանրութիւն մը գտնել:
Կառավարութիւնները շատ տա-
րիներէ ի վեր կը զգան այս կա-
ցութեան ծանրութիւնը, որուն
մէջ նշանաւոր մաս մը ունին պա-
տերազմական պիւտճէները: Իրենց
շահը, հարկատուներու մեծամաս-
նութիւնը ժամանակ մը ետքը ու
է հարկ վճարելու բացարձակապէս
անկարող տեսնելու մեծ երկիւղը,
ինչպէս կերեւայ, ստիպեց տէրու-
թիւնները իրենց սպառողներու
թիւները, գոնէ բանի մը տարի,
ա՛յ առաջ չի մղելու մասին մտա-
ծել ու այս ակամայ, ցուօք արտի
անշուշտ: Կարելի ու մինչեւ իսկ
հասանական է որ, գէշ աղէկ, հա-
մաձայնութեան մը յանգին, բա-
նի որ դիւանագիտութեան վեր-
ջին տարիներ բռնած ընթացքէն
կերեւայ որ եւրոպական տէրու-
թիւնները, իւրաքանչիւրը իր հա-
շիւներով, չեն ուզեր մօտ ժամա-
նակի մէջ պատերազմի առիթ տալ:
Ուստի կրնան համաձայնիլ իրենց
սպառողներութեան խնդրը չփա-
ւորելու, իրենց պատերազմական
ծախքերը նուազեցնելով ժողո-
վուրդին պզտիկ չունչ մը առնել
տալու առ այժմ, որպէսզի ժամա-
նակ մը ետքը, երբ իրենց հա-
շիւներով պատերազմելու ժամա-
նակը մօտենայ, կարենան աւելի
ուժգնութեամբ ծանրանալ հար-
կատուին քսակին վրայ:

Թ. Պ.

ՈՒՍԱՆԱՀԱՅՈՒՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐ.

—)(—)

Ռուսահայերը, ժողքահայերը
ըսենք եւ պարսկահայերն, անշուշտ
կը կարծեն թէ Ռուսահայ իրենց
արեւակիցներն ալ ունին ազգային
կեանք մը՝ որ կը թէ տոհմային տե-
սակէտով այնքան փայլուն չէ եւ
յուսաշող, զեթ կեանք մըն է՝ որ
ազգային դրամ կը կրէ. կեանք
մըն է որ Հայաստանի զաւակնե-
րու կեանքին հետ կապուած է,
եթէ ոչ ամրապինդ, գէթ հայկա-
կան գոյն ունի, ազգատիպ բան
մըն է, կամ գոնէ մէկ օգակն է
այն շղթային որով իրարու կապ-
ուած են կրանն աշխարհի չորս
կողմը գտնուող հայերը:
Ա՛հ, եթէ գիտնային թէ այդ
օգակն փրկի է, զատուել է այն
շղթայէն որ կը տարածի ամեն
կողմ անվերջ ու անծայր, միաց-
նելու եւ իրարմէ անբաժան պահե-
լու համասեւ, համարիւն, համա-
նուն եղբայրներ, շղթայ մը որ
գոգցես երբեմն մաքնիսական ա-
ւելի մեծ ոյժ ունէր եւ որուն «հա-
յու ազգային կեանքը» անսնդ կու-
տանք:
Ա՛հ, արդարեւ ինչքան մեծ ան-
սահման պիտի ըլլար ճշմարիտ ազ-
գասէրներու ցան ու վիշտը, երբ
խորապէս զգան եւ լմբանան թէ՛
Ռուսահային՝ հայ ազգային
կեանք չունի, այլ աշխարհաքաղա-
քացի մըն է:
Ռուսահայուն կրօնքն միայն,
պահ մը զինքը չէզոքացուցած է,
եւ հեռի պահած իր շուրջն զըտ-
նուող ազգերուն հետ խառնուելու,
ձուլուելու վտանգէն. այս չէզոքա-
ցումն ալ, այնքան ժամանակ տե-
ւած է որքան լստին չին պակասած
հայրենաւանդ ներշնչումներով ու
գեւերուած սերունդներ, որքան ա-
տին ունեցած ենք արեւակիցներ,
որոնք ուխտած են մինչեւ իրենց
վերջին շունչն փարած մնալ լու-
սաւորչայ լոյս հաւատքին, որոնք
կրօնային սուրբ զգացումներով տո-
գորուած, խանդավառուած են եւ
ապրած միայն այդ հաւատքով:
Հիմակ, այդ կրօնասէրներու յա-
ջորդած են նորեւելները, ո՛չ թէ

դրական իմաստասիրութեան հե. տամուտները, այլ յոռի սովորու. թեանց հետեւողները, որոնք թէ. պէտ իմաստասիրութիւն չեն ու. սած այլ իմաստակներ են. թույա. ցած կրօնասիրութեան մէջ, ան. նպատակ կեանք մը կապրին, ա. նոնցմէ շատերը նիւթասիրութեան ախտէն վարակուած, արծաթը և իրենց անձը կը պաշտեն. ազգա. սիրութիւնն ինչ է չը գիտեն, հայրենասիրութեան վրայ դադա. փար չունին: Քանի մը քաղաք. ներու մէջ մէկ երկու անձեր մի. այն մնացիր և որոնք գեղեցիկ և ազնիւ զգացումներ կը տածեն և քակայն անոնք չեն որ մեղ յոյսեր պիտի արծարծէին:

Անվիճելի ճշմարտութիւն մըն է որ Ռուսմանհայք մեծ մասամբ ազնիւ մարդիկ են, պատուաւոր ազգակիցներ, ընդհանրապէս բա. րեկեցիկ. բայց անոնցմէ շատե. րուն կը պակսի ազգի սէրը, այդ սուրբ սէրը գոյնզգոյն այլ անա. րատ, անբիծ և խորարմատ: Տա. րիներն եկած ու քացած են և տա. րած իրենց հետ և թողած յաւեր. փապէս իրենց հնութեան մէջ՝ հայ զգացումներն և հայու ներշնչում. ներն. սառն անտարբերութիւնն տիրած է սրտերու մէջ որք ա՛յ չեն տրոփեր ո՛չ մեղմիկ ո՛չ ուժգնա. պէս, հեռակայ ազգակիցներու հա. մար:

Անոնք, որք միայն լսած են մերթ ընդ մերթ կամ կարգացած Ռուսմանհայց կեանքէն, երբէք չեն կրնար երեւակայել այն հոգի յուզող կացութիւնը որ մեր այս ազգակիցներու վիճակուած է, բաղդի, անտարբերութեան ըսենք և կամ թէ քաղաքակրթական հո. սանքի բերումով: Ռուսմանհա. յու ազգային կեանքի հորիզոնն շատոնց մթազնած է. կորուստն ա՛յ անխուսափելի է. մեր սրտերն խոցոտած և կարեվէր, քանի՜ կը մտածենք թրանսիլվանիոյ երբեմ. նի հայութեան վրայ և մեր աչ. քերուն առջեւ կը պարզի տխուր վաղորդայնը, կ'ողբանք և աղ. շոր արցունք կը թափենք. թո՛ղ կաթին այդ շիթերն արիւնաբուղի

սրտերէ, գէթ զովանայ մեր սիր. տըն բոցավառ, գէթ հովանայ մեր հոգին հրակէզ:

Ռուսմանհայց կորստամերձ վի. ճակին վրայ խօսելով՝ անշուշտ մեզմէ ո՛չ մէկուն մտքէն չէ ան. ցել վայրկեան մը իսկ ապեբախ. տութեան յորդորել մէկն ու միւ. սը: Իւրաքանչիւր Ռուսմանհայու նուիրական պարտքն է երախտա. գիտութեամբ համակուել դէպ այդ տոհմիկ ազգն՝ որ անխտիր ամեն ազատութիւն, ամեն իրաւունք, ամեն բարիք կը շնորհէ իր հա. տակ քրիստոնեայ ժողովրդոց, մա. նաւանդ հայիրուն. մենք կը ցան. կանք որ Ռուսմանհայք ամեն բա. նէ առաջ՝ սղաւանդեալ անբիծ, անփոփոխ հաւատարմութիւն ցոյց տան դէպ այս քրիստոնեայ պե. տութիւնն որու մեզ շնորհած բա. րիքներն շատ են ու բազմատե. սակ: Եթէ գտնուեցան բարձր դրից տիրացող տխուր դէմքեր, որոնք ջանացին այս ինչ կամ այն ինչ պետութեան հաճելի երեւալու համար մեր նուիրական իրաւունք. ներն անտեսել, եթէ գտնուեցան անսիրտ մարդիկ որոնք մերժեցին պարզ հիւրընկալութիւն մը, բռու. նակալներու սուրէն և թուրէն պրծող մահուան ճիրաններէն խու. սափող թշուառներու, եթէ զրտ. նուեցան անձեր, որոնք թէպէտ քաղաքագէտի համբաւ ունին այլ դիւանագիտութեան անգիտակ են և ազգի մը դարաւոր իրաւունց դէմ գործեցին նոյն իսկ եկեղե. ցականներ վտարելով երկրէն, պէտք չէ մոռնալ սակայն թէ՛ քաղաքա. կան հզօր կուսակցութիւններ կան այս երկրի մէջ, որոնք ծանօթ են իրենց հայասիրութեամբն, և նոյն իսկ հայ գաղթականներն չընդու. նող կուսակցութիւնն ալ հայասէր. ներու ստուար թիւ մը կը պարու. նակէ:

Թիրաւի պէտք չէ մոռնալ եր. բէք թէ՛ Ռուսմանիա եղած է ա՛յն ազատ երկիրն ուր հայերն քա. ղաքական, զինուորական՝ դիւա. նագիտական, վերջապէս ամեն տե. սակ բարձր պաշտօններու հասած են ու կրնան հասնիլ անխտիր, եւ

սակայն ինչ որ կը պահանջենք մենք հայ ազգակիցներէ, այդ ի. րենց պատուաւոր քաղաքացիի պարտքն ազնուօրէն կատարել վերջ՝ մնացածն է. մեր պահանջա. ծըն է չը մոռնալ իրենց լեզուն, եկեղեցին, ազգն ու ազգակիցնե. րը:

Սիրենք Ռուսմանեան ու Ռու. մանացին մեր հոգւոյ բոլոր ու ժողով և սրտի անկեղծութեամբ, հաւատարիմ և երախտագէտ ըլ. լանք, բայց չը մոռնանք հեռա. բնակ մեր տարաբաղդ արեւակից. ները, մեր եղբայրները: Մէկդի թողով ուրիշ ամեն նկատում, ըմբռնեք միայն թէ՛ ազգասիրու. թիւնը, հղբայրասիրութիւնը, մարդասիրութիւնը գեղեցիկ յատ. կութիւններ են առաքելութեան հոմանիշ:

Վաւերաւ

Ռուսմանիա

ՏԵՍՈՒԹԻՒՆ ՄԸ

ՎԱՐՈՒՆԱՆՑ ՊԱՏԵՐԱՉՄԻՆ ՎՐԱՅ

(Շար. մեր Աստուծոյ քիչեմ)

Մեր տոհմային պատմութիւնը մեզ կուսուցանէ թէ՛ Վաւերաւոր. հի մահուանէն վերջ (414 յետ Քը. րիստոսի) Սահակ Թաղկերտի եր. թալով Անյոյն բերդին մէջ բան. տարկուող խոսքովու ազատութիւ. նը խնդրից. Թաղկերտ Սահակայ խնդիրը կատարեց. որով խոսքով իբր՝ թագաւոր երկրորդ անգամ գահ նստաւ, և հազիւ 8 ամիս կամ տարի մը թագաւորելով մե. ռաւ (տի՛ս խորհնացի Գ. գիրք Ծ. Ե. գլուխ): Այսպէս Թաղկերտ որ մանաւանդ հայոց հետ սիրաշա. հութեամբ վարուիլ կը սիրէր. յանկարծ փոխուեցաւ. գրգռուե. լով քրիստոնէից մոլեռանդութե. նէն որ Ատրոշաւն մը այրեցին, արարք մը որ քրէական յանցանք կը համարուէր Սասանեաններու օ. րով:

Այսպէսով Սասանեան վայրագ ու կատաղի բռնակալութիւնը, ի. րեն կէս նպատակի ընելով հա. րաւ:

տակ քրիստոնէից դարձն ի մոգու. թիւն, մեծամեծ զոհողութիւննիւր ըրաւ. թէեւ երբեմն ներքին ու արտաքին յարձակումներ ու խը. րտումներ, ինչպէս նաեւ քաղա. քական պառակտումներ կը յապա. ղեցնէին և կը դժուարացնէին այս ծանրակշիռ և դժուարին ձեռնար. կը:

Թաղկերտ յետ մահուան խոս. րովու, իր Շագաւոհ որդին Հայոց վրայ թագաւոր դրաւ (419-420) հրահանգելով զայն, որպէսզի մեղ. միւ. ջանայ ընտելացնել զՀայս Մաղղեղանց կրօնին, բայց այս նախափորձն ապարդիւն մնաց:

Նախարարներն ու աւագանին թագաւորական գահուն վրայ բաղ. մող Պարսիկ արքայորդոյն հետ արհամարհանօք վարուեցան. մեր պատկառելի պատմիչն՝ Մովսէսի խորհնացւոյ պատմագրութեան Գ. գրոց Ծ. Ե. գլուխը քանի մը օ. րինակներ կուտայ առ այս: Շա. րաւ իբր չորս տարի թագաւորե. լով, իր հօր հիւանդութեան պատ. ճառաւ Պարսկաստան վերադար. ձաւ, իր մեկնումէն վերջ հայ նա. խարարաց և իր տեղակալին մի. ջեւ հղած արիւնահեղութիւններն երկու կողման ալ զնաստարեք եղան, և Պարսիկը (419-421) շուրջ երեք տարի անիշխանութեան մատնուե. ցան, մինչեւ որ Վաւեր Ե. որ խո. րենացիէն սխալմամբ Բ. կը կոչ. ուի, գահ բազմելով առեւտրական խնդրոց և կրօնական մոլեռանդու. թեան պատճառաւ պատերազմի ե. լաւ Յունաց հետ, պատերազմ մը որ դժբախտաբար շատ սուղի նըս. տաւ մեզ հայոցս. որովհետեւ եր. կու կողման անագորոյն յաղթու. թիւններէն վերջ, դաշմաբ հաշ. տութիւն գոյացաւ, և Հայաստան որ 384ին բաժանման վիճակին մէջ մտած էր, կրկին բաժնուեցաւ Յունաց և Պարսից միջեւ: Այս բաժանումը Վաւեր Ե. ի Հայոց հետ ունեցած քննախնդրութեան և կա. տաղի տառապանքի յաջորդ տը. ւաւ և անշուշտ խորհնացին այս պարագան կակնարկէ իր Գ. գրոց Ծ. Ե. գլուխն մէջ ըսելով. «Վաւեր զբէն վրիժուցն խնդրեաց ի մերմէ աշխարհէս»:

ԲՈՒՆՈՒԹԵԱՆ ՏԱԿ(7)

ԺԱՄԱՆԱԿԱԿՅՑ ՆԱՅ ԿԵԱՆՔԷ ՊԱՏԿԵՐ ՄԸ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

Պէտք է ըսել որ Մինասի մայրը եւ Շուշան, իրենց հարազատին մէջ եռա. ցող զգացումներուն մէջ բոլորովին հակապատկեր կը ներկայացնէին. Մի. նասի Վահրամի մասին ըրած ակնարա. կութիւնները մանաւանդ խոցեցին հայ օրիորդին սիրտը որ ինչպէս ծանօթ է արդէն, ուժգին կերպով կը բաբախէր Վահրամին համար. իրենք ամենէն ա. ւելի կը ճանչնային Մինասի հոգեբա. նութիւնը, համոզուած էին որ ան երբ կոյր վրէժխնդրութեամբ լցուէր մէկուն դէմ ամեն չարիք գործելու ընդունակ գազան մը կը դառնար: Տիկին Սաթե.

նիկ երկու սուրի մէջ մնացած էր. չէր կրնար իր գաւակին չար դիտաւո. րութեան մասին ո եւ է կերպով յայտ. նութիւն մը ընել Յովհաննէս աղաի ընտանիքին. իր ընտանիկան արժա. նապատուութիւնը իր իսկ ձեռքով մեղքուցած ըլլալու սոսկումով կը հա. մակուէր այսպէս մտանած ատեն: Իսկ Շուշան շատ չը վարանեցաւ ազոր մէջ. նա կը սիրէր տիկին Վերգինէն, Հրա. նոյշը, պատկառոտ ակնածանք մը ու. նէր Յովհաննէս աղաի մասին, իսկ Վահրամը որ անոնց մօտ կաշխատէր պաշտելի էակն էր աշխարհի մէջ իրեն համար՝ տանջուր տարեկան այդ գա. ւառացի աղջիկը ընթրիքէն ետքը սի. րոյ եւ սարսափի զգացումներով ճրագ մը վառեց, սենեակը առանձնանալով կեղծուած գիրով նամակ մը գրեց Վահրամին վերահաս վտանգի մը նա. խեղճանքը երգելով անոր. նամակը Վահ.

րամի տունը զրկեց հաւատարիմ թուրք ջորեպանի մը հետ որ Մինասի հօր ատենէն կը ծառայէր անոնց, անբա. ցատրիւ գորով ունէր Հրանոյշի վրայ. իր դիրկին մէջ մեծցուցած էր զանի: Շուշան վստահ էր անոր դադանապա. հութեան մասին, «Նամակը տար ա. ռաւօտեան մութին, առանց ինքզինքդ ճանչցնելու դռնէն ձգէ՛. նեռացի՛ր» ըսած էր անոր: Զորեպանը կէտ առ կէտ գործադրած էր Շուշանի հրա. մանը:

Մինաս ծրագալոյցի երեկոյին իր մօր առջեւ թափած սպառնալիքէն ետք երկրորդ օրը, Մինասի շնորհաւորու. թեան առթիւ Յովհաննէս աղային տունը այցելեց, ուր Տիկին Վերգինէ քաղաքական սովորութիւններն դոր. ծաղրեց, բայց Հրանոյշ մէջտեղ չեկաւ, այլ օղին եւ անուշիկէնը աղախինը բե. րաւ: Մինչդեռ անցեալ տարի այդ ծա.

ռայութիւնը ինք, օրիորդը մատու. ցած էր:

Միւսուղի օրուան յատուկ խօսակցու. թեան բանաձեւը վերջնապէ ետք, Մինաս վերջապէս չկրնալով համբերել՝ «Օրիորդ Հրանոյշը ուրէ, հարցուց տիկին Վերգինէի:

—Ներսը ըլլալու է, պատասխանեց այս վերջինը. եւ դառնալով դէպ ա. ղախինը որ զրան մօտ կըսպասէր ա. ւելցուց. գնա՛, ըսէ՛ որ ներս գա՛ս»:

Աղախինը հրամանը գործադրեց եւ վայրկեան մը ետքը, գեղանաղ աղջիկը լուսնեկի մը պայծառութեամբ ներս մտաւ, Մինասի ձեռքը առաւ ապա գնաց նստիլ մօրը քով: Մինաս պահ մը իր նուածքը չզատեց Հրանոյշի վը. րայէն, այն օրը գուցէ առաջին ան. գամը ըլլալով՝ իր սիրտին մէջ տըռ. փանքի հանդէպ՝ անկեղծ սիրոյ աղօտ զգացումներ իրարու հետ պայքար մը.

Սակայն հայրենիքի այս դժուարմբեր և անտանելի կացութեան մէջ, կենդանացուցիչ և բարեբար երկու անդուգական հանճարներ, հայութեան հորիզոնին վրայ պըսպղացող երկու լուսատու աստղեր, Սահակ ու Մեսրոպ, հայութեան մտաւոր ու բարոյական յեղաշրջման այս երկու ջանքերը գրոց գիւտէն վերջ, իրենց կատարեալ անձնութեամբ և անկեղծ հայրենասիրութեամբ, անարժան վերաբերման արգելադրանքները իրենց ինքնապարտաւիր մեղաւորութիւնները քաւելու կոչումին նուիրուած, հայութեան քաղաքական ու բարոյական լայն վերաբերման սպեղանի ըլլալ կուզենք:

Սահակ կաթողիկոս Հայաստանի բաժանումէն վերջ, ոչ-նուազ ջանքեր ու զոհողութիւններ ընելով, երկիրն անիշխանութեան մատնելու տեսնելով, քաղաքական հեռատես հայեցողութեամբ պարտաւորեցաւ Յունաց բաժնին մէջ երթալ:

Գժախտաբար Սահակ կաթողիկոս ընդունելութիւն չեղաւ, Յոյք նոյն իսկ չը թողարկեցին նորագիւտ նշանագրով հայ լեզուի ուսուցումը (տե՛ս Խորենացի Գ. գիրք ԾԷ. գլուխ): Իսկ Մեսրոպ, Երզնայի հայութեան այս տիպար հանճարը, Պարսից բաժնին մէջ վարժարաններ բանալով հայութեան ապագան ապահովող աշակերտներ ու կարող ուժեր պատրաստեց (տե՛ս Խորենացի Գ. գիրք ԾԷ. գլուխ): Սահակ կաթողիկոս այս անաշխուհիւններէն չընկրկեցաւ երբեք, դժուարութիւնը բարձր միջոցներու դիմեց, կ. Պոլսոյ Յունաց Թեոդոս կայսեր և Ատտիկոս Պատրիարքին աջակցութիւնն ու պաշտպանութիւնը խնդրեց. իր թոռն վարդան Մանուկեան և աշխատակիցն Մեսրոպ տարին թուղթերն ի կ. Պոլսի:

Նոյն ատենները Յոյն արքունիաց մէջ տիրող քաղաքական հանգամանքներն ու Պատրիարք սրանի կրօնական նկատումները այս

պատուիրակութեան ձեռնարկին յաջող ելքը կերպարարեցին, և իրաւունք մեր պատուիրակներն յաջողութեամբ պսակուած և պաշտօններով մեծարուած (ինչպէս վարդան Մանուկեան Ստրատելատ և Մեսրոպ Եկեղեցիապետիկոս) վերադարձան Սահակայ մօտ:

Սահակ կաթողիկոսի Պարսից բաժնին թողնելով Յունաց բաժնին մէջ երթալն առանց պատճառի չէր, այդ խորագետ և հեռատես հայր կը զգար և կը նախատեսէր թէ՛ Յունական բաժնին մէջ գտնուած հայերը դիւրաւ կրնան կորսուիլ, երբ ինկատի կառնէր մանաւանդ ա՛յն պարագան թէ՛ Հայերը քաղաքականապէս պառակտուած լինելով, հաւատակցութեամբ և յունական ազգեցութեամբ եկեղեցականապէս ևս պիտի պառակտէին եթէ բաժանեալ Հայոց միութեան երկու զօրաւոր կապերն ու ազգակները՝ Եկեղեցին ու լեզուն չի գոյն իր գիւղի ու արմատախել օտար ազգեցութիւնն ու որոշները:

Քաղաքագիտութեան այս ախպար հայը Յունական ծուղակը հայկական խորագիտութեամբ քակեց, և զգուշաւոր շրջահայեցութեամբ ապագայ քաղաքական անկախութեան կռուաններ պատրաստեց: Այսպէս Սահակ Յունաց բաժնին մէջ գտնուող հայոց վիճակը նըպաստաւոր դրեց մէջ դնելով, Պարսից բաժնին մէջ գտնուող հայ նախարարներէն եկած հրաւերի մը համաձայն վերադարձաւ, իրեն փոխանորդ կարգելով Մեսրոպ (տե՛ս Խորենացի Գ. գիրք ԾԷ. գլուխ):

Սահակ Պարսից բաժնին վերադառնալով, համամիտ նախարարաց խորհրդակցութեամբ և ազգու պատուիրակութեամբ նախարարները կը հաշտեցնէ վռակ Ե.ի հետ, և վռաւապուհի որդին Արտաշէս Թագաւոր կը գրուի Հայոց վրայ Արտաշիր անուամբ, անոր օրով վերջացաւ Արշակունեանց հարստութիւնը 580 տարի տեւելէ վերջ (տե՛ս Խորենացի Գ. գիրք ԾԷ. գլուխ):»

Արտաշէս կարապետեան
Շարունակելի

ԼՐԱՔԱՂ

— — —

Անցեալ երեքշաբթի օր Կրօնական Ժողովը Պատրիարքարանի մէջ գումարուած է ընդ Ատենապետութեամբ Գր. Բեգլարի Արքեպիս. Յովհաննէսեանի, Ինչպէս կերեւայ Օրմանեանը յաջողած է հրաժարման խնդիրը գոցել: Բայց յայտնի չէ թէ Մանուկեանի եպիսկոպոսի մէջ երկու ընկերները ներկայ գտնուած են այդ ժողովին թէ ոչ:

— Պոթուլանի եկեղեցւոյն Հոգաբարձութիւնը խնդրած է Կրօն. Ժողովէն որ Տ. Աթանասի ներում չտրուի: Ժողովը չէ հաճած կարգաւորել հոգևած յիշեալ քահանային համար տարբեր տնօրինութիւն մը ընել:

— Եղիսիոյ Առաջնորդ Տէր Խորէն Եպիսկոպոսի Պոլսի գալու արտօնութիւն չէ տուած Կրօն. Ժողովը, նկատելով թէ այդ կողմերը ուրիշ եպիսկոպոս բնաւ չի կայ՝ քահանայ ձեռնադրելու համար:

— Պոլսոյ Նուպար քաշա, ի պատասխանի Տ. Միքիմիայի Սրբազանի ցաւակցական գրոյն, 208 անգլ. ոսկի զրկեր է: Իգլիկի յատուկ ունէ է բարեգործութեան մը համար:

Ուրախալի է տեսնել որ վսեմ. Պոլսոյ քաշա հետգնեւէ ազգային բարեւարի մը յատկութիւններ ցոյց կուտայ:

— Վանայ Լատին որբանոցէ մը քըսանի չափ հայ տղաք փախչելով Ազգ. Առաջնորդարանը կապաւինին: Տեղապահ վարդապետը անմիջապէս չընդունեց զանոնք, այլ կուգէ փորձել անոնց վերադարձին անկեղծութիւնը: Կրտսէ թէ «Ջաւահիր» գիտնալու էք որ կարող չեմ ձեզ պահել: Գարա չունինք, տղաքներ ևս աղքատ ընտանիքներ ալ չատ կան մեզ մօտ: Շատ շատ, ուրիշ բան չեմ կրնար ընել բայց եթէ վարագ կամ ուրիշ վանք մը զըրկել ձեզ, ուր շատ անգամ չոր հաց միայն պիտի գտնէք, եւ գուցէ օրն իբրեւն ալ պիտի տշխատիք: Գտնուած տեղերնիդ աւելի հանգիստ չե՛ք:» — Տղաքը միաբերան կը պատասխանէ թէ իսէր իրենց եկեղեցւոյն, պատրաստ են այսքան նեղութիւն մը յանձն առնուլ, եւ աշխատութեան ալ չեն փախչիր: Ժող չեն իրենք եւն: Ասոր վրայ կորոշուի տղաքը վարագ զրկել: Բայց որովհետեւ հոն անկողին, հագուստ ամեն բան ծայրը ծայրին է, նպաստաւորաբար Խան Յովհաննէս Բեգլարի մով կը գիւնուի Տղ. Բեգլարի, որ կուտայ 80 պրակ տեղային չիթ, 40 պրակ տեղային կտաւ մահիճի համար եւ կը խոստանայ քիչ մը ժամանակ ալ

մոտենդի մասին օգնել, մինչեւ որ վարագայ Հոգաբարձութիւնը միջոց գտնէ նորեկները խնամելու:

— Վանայ ամերիկեան որբանոցէն 10 չափ հասակաւոր որբեր իրենց գեղերը զրկուելու են ամսոյս սկիզբը, տրուելով ամեն մէկուն անկողին մը, ձեռք մը զգեստ, ղոյգ մը եղ դնելու համար իւրաքանչիւր որբի հնգական լիւր, նաեւ սեմինցու, եւ ուտելու ցորեն, որպէս զի նորէն տուն տեղ ըլլան իրենց գեղին մէջ, փոխանակ քաղաքին մէջ ոչնչանալու բարսպապէս:

— Նոր բացուելիք Ռուսահայ որբանոցը Վանայ վիճակին մէջ պիտի ըլլայ, եւ Լատին որբանոցէն փախչող քսան տղաքն հոն պիտի ընդունուին:

— Պոլսոյ Ազգ. Հիւանդանոցի արհեստաւոր աշակերտներն կօշկակարութիւն կը սովորէին վարպետներու հրակողութեան տակ. անոնք Ջաւակի առթիւ 400 ղոյգ կօշիկ յանձնեցին հիւանդանոցի եւ որբանոցի տղայոց համար, եւ կը շարունակեն աւելի մեծ քանակութեամբ պատրաստել:

— Արաբկերի որբանոցին իբր եռամսեայ նպաստ Ռոստոքցիք 25 ոսկի եւս զրկած են տեղւոյն Առաջնորդ Տ. Յովսէփ վ. Այվազեանի ձեռք, որ Պոլս հասածին պէս ուղղակի ոստիկանութեան նախարարին ներկայացած է եւ յետոյ Պատրիարքարան եկած: Անշուշտ այս տարօրինակ այցելութիւն զօրաւոր պատճառ մը կամ գաղտնիք մը ունենալու է: որ կը յուսանք ի մօտոյ պարզուի մեզ:

— Պատրիարքը պաշտօնագիր մը ուղղելով Եգիպտոսի Առաջն. Տեղապահին յա՛նձնարարարեց որ Հան. Նա Աթիսի Ժառանգութեան կարգադրման առթիւ տէր կանգնի Սոյ աթոռին 480 ոսկի պահանջին, որ տոկոսներով կը մնայ եղբր հանգուցելոյն քով, իբրեւ արդիւնք յանուն Սոյ աթոռին եղած հանգանակութեան մը հոն գուցեալ կաթողիկոսին օրով:

ՆՈՐ ՆՊԱՍՏՆԵՐ

ՎԱՆԱՅ ՍՈՎԵԼՈՑ

Պատրիարքարան հասած է Եգիպտոսէ 33 ոսկի, Ամերիկայէ 30 անգլ. ոսկի, Սկիւտարի Թաղերուն մէջ բացուած հանգանակութեան արդիւնքէն երկրորդ անգամն ըլլալով 2146 դահիկան, Կեսարիոյ Ազգ. վարժարանի երկսեռ ուսանողներէն 890 զըշ, Պէշիկթաշի Թաղէն 2884 1/2 զըշ, Սահիլեթիէն 223 ոսկի, Ճիպուլթիէն (Ափրիկէ) 200 Փրանգ, Պօզլանէն 500 Փրանգ:

վեցին. կեանքը անոր կեանքին կապելու գաղափարը պաշարեց բոլորովին զինքը. ուրկէ ետքը կեցող խրամատը, արդիւնք ներկայացաւ միտքին: «Պիտի վերցնեմ այդ խոչնդոտները, մոռնեց հեղ մըն ալ ինքնիրեն: Մինչդեռ Մինաս այս խոհերով կը տանջուէր եւ իր թունաւոր նայուածքով կը սարսուցնէր Հրանոյշը, տիկին Վերգինէն ալ իր գանգուր գաւակին գանկը կը շոյէր: Գիշ մը ետքը Մինաս ոտքի կանգնելով մեկնեցաւ:

Չ:

Յունվարի վեցէն ետքը երեք շաբաթ անցաւ: Յովհաննէս աղան իր գործին կը նաւէր, Մինասի սիրտին մէջ օձեր կը սուրային. տոբիի կիրքը իր վերաւորուած արժանապատուութեան վիշտին խառնուած տակաւ նորանոր համեմատութիւններ կառնէր. Շուշան Վահրամի սիրով սկսած էր

տանջուելու. տիկին Սաթենիկ անբացատրելի մտատանջութեան մէջ ընկղմած Մինասի սպառնալիքէն հետեւեալիք վախճանին կը սպասէր, տիկին Վերգինէն Հրանոյշով կը շարունակէր մխիթարուիլ. իսկ Վահրամ իր գործով կը զբաղուէր Յովհաննէս աղաի գործաւեհակին մէջ, նոյնպէս իր դասերը կը շարունակէր Հրանոյշին:

Հրանոյշի եւ Վահրամի յարաբերութիւնները մոռնուցէն ետք դաս առնելու շրջանակէն դուրս ելան: Նոր բացուած այդ վարդը իր աշխատասիրութեամբ, ուշիմութեամբ եւ գեղով սկըսած էր տիրապետել Վահրամի սիրտին: Վահրամ զգայուն երիտասարդ մը ըլլալով մէկտեղ, մինչեւ ան ատեն իտէալական սիրոյ եւ երեւակայական հուրի մը հեռապատկերներով տոգորուած, իր այդ զգացած սէրը իրականութեան մէջ գեղուհի մը նուիրել

կը մտածէր. Հրանոյշի դասախօսութիւններ առիթ տուին վերջապէս որ իր սէրը գայ հանգչի այդ հրեշտակին վրայ: Եւ երջանիկ օր մը, իր կեանքի ամենէն քաղցր օրը երբ սիրավատ ակնարկ մը սեւեռած էր դասի պահուն Հրանոյշի սեւ ու խոշոր աչքերուն վրայ, բացատրութիւն մը պահանջելու համար պատահեցաւ որ այս վերջինն ալ իր կուսական անմեղ նայուածքը վերառնէ. նայուածքը Վահրամի կրակոտ միտքինակ հայեցողութեան մէջ վայրկեան մը պաղեցաւ. ճշմարիտ սիրոյ ամենէն անոյշ, առաջին յոյզերը զգաց եւ տեսաւ մը երեկտրական հոսանք, գուցէ սիրոյ երեկտրական հոսանքը արագ իր մարմինին շրջանը ըրաւ. ինչպէս Վահրամ Հրանոյշէն այնպէս ալ Հրանոյշ Վահրամի լարած սիրոյ ծուղակին մէջ բռնուած: Այդ օրուան դասախօսութիւնը, մինչ յաջորդ օրեր իր

լրջութիւնը պահեց սակայն գէթ այն ատեն միայն թոթովումներով վերջացաւ: Վահրամ դասի աւտրտումէն ետք բաւական ատեն կը մնար տունը, բայց այդ գիշերը հազիւ թէ քանի մը վայրկեան մնաց հիւրասենեակը ուր Տիկին Վերգինէն ամեն ատեն կը սպասէր:

Ուշադիր տիտղ մը, անմիջապէս պիտի կրնար նկատել անոր ճակտին վրայ հոգեկան յուզմունք արտայայտող աժպնութիւնը, եւ ատոր պատճառը շատ հեռուն ինտսել պէտք չպիտի ըլլար: Տիկինին մէկ քանի հարցումներուն հաղիւ թէ պատասխանելու համար կցկտուր բառեր գտաւ, իսկ Հրանոյշի մօր ընդանուր կերպարանք ունեցող բացատրութիւնները լուռ ու մունջ մտիկ ըրաւ:

Ծ. Կարմարակաւ

(Շարունակելի)

Печатница на И. Хр. Войниковъ
Отговорникъ Н. Драгулевъ